# ԱՐԳԵԼԵՆՔ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԼՈՐՊԻՐԻՖՈՍԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՍՆՆԴԱԿԱՐԳՈՒՄ

Քլորպիրիֆոսը ֆոսֆորօրգանական միջատասպան նյութ է, որն օգտագործվում է գյուղատնտեսությունում, բժշկական, սանիտարական և կենցաղային ախտահանման աշխատանքներում:

## ՈՐՏԵ՞Ղ Է ԱՅՆ ԳՏՆՎՈՒՄ

Քլորպիրիֆոսի մնացորդային քանակները հաճախ առկա են կաթնամթերքներում, բանջարեղենում, հացահատիկներում, մրգերում և խմելու ջրում:








**ՔԼՈՐՊԻՐԻՖՈՍԸ** ամենատարածված թունաքիմիկատներից է: Հայտնի է մանկական ուղեղի զարգացման վրա իր ազդեցության վնասակար հետևանքներով:

**ԱՐԳԵԼԵՆՔ ՔԼՈՐՊԻՐԻՖՈՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

**ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ**

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՅՆ ԱԶԴՈՒՄ ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Քլորպիրիֆոսի ազդեցությունը, նույնիսկ փոքր չափաքանակներով, կարող է վնաս հասցնել երեխայի ուղեղի զարգացմանը և էնդոկրին համակարգին:

### ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԴԱ ԿԱՊՈՒՄ ԵՆ՝



երեխաների մտավոր զարգացման գործակցի նվազման հետ



աշխատանքային հիշողության կորստի հետ



էնդոկրին համակարգի գործառույթի խաթարման հետ





Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Քարոզարշավ քլորպիրիֆոսի վտանգավորության մասին» ծրագրի շրջանակում:

Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
Վեբ կայք՝ http://www.ruraldaf.am